

## ՍՅՈՒԶԱՆՆԱ ՆԱԶԻՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի  
և իրավունքի ինստիտուտի հայցորդ

### ԱՉԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Սույն հոդվածում հանգամանորեն քննարկվում է ազգային օրենսդրության ներկա վիճակը, ինչպես  
նաև օրենսդրության կատարելագործման հետ կապված հիմնախնդիրները:

**Հիմնարարեր՝ ազգային իրավունք, գործող օրենսդրություն, իրավունքի համակարգ, իրավունքի  
ճյուղ, իրավունքի ինստիտուտ, իրավական նորմ:**

Հանրահայտ փաստ են հաճախակի դժգոհու-  
թյունները ազգային օրենսդրության ոչ բավարար  
արդյունավետության, ցածր որակի և բազում բա-  
ցերի վերաբերյալ: Նման տեսակի կոնկրետ թերու-  
թյունների դիտարկումները, դրանց պատճառների  
որոնումները մեծ տեղ են գրավում ոչ միայն մաս-  
նագիտական գրականության, այլև օրինաստեղծ  
գործունեության մեջ<sup>1</sup>:

Օրենսդրի հասցեին արտահայտված քննա-  
դատական դատողությունները ընդհանրացված  
ձևով կարելի է հանգեցնել երեք հիմնական թերու-  
թյունների՝ օրենսդրության անհամակարգվածու-  
թյուն, ներքին հակասականություն, նորմատիվ-  
իրավական ակտերի անհարկի և ավելորդ բազմու-  
թյուն: Ամեն մեկը դժվարացնում է ծանոքացումը  
նրանց հետ և նրանց կիրառումը ֆիզիկական և  
իրավաբանական անձանց իրավունքների և շահե-  
րի պաշտպանության համար: Նման տեսակի թե-  
րությունների արձանագրումը վերաբերում է գոր-  
ծող օրենսդրության կառուցվածքային բոլոր մասե-  
րին՝ հիերարխիկ (ուղղահայց), ճյուղային (հորի-  
զոնական) կառույցներին: Ներկայումս դեռևս իրա-  
վաբանական գիտությունը և օրենսդրական պրակ-  
տիկան ակնհայտորեն անբավարար ուշադրու-  
թյուն են դարձնում այս հիմնահարցերին՝ անտեսե-  
լով նույնիսկ նրանց հույժ կարևորությունը:

Զգալի շափով դա կապված է այն բանի հետ,  
որ գիտության մեջ բավարար կերպով չեն մշակ-  
ված «իրավունքի ինստիտուտ» և «օրենսդրության  
ինստիտուտ», «իրավունքի ճյուղ (ենթաճյուղ)» և  
«օրենսդրության ճյուղ (ենթաճյուղ)» գոյացած կա-  
տեգորիաների հարաբերակցության հարցերը: Այս  
կատեգորիաներից յուրաքանչյուրում ընդհանուրի  
և առանձնահատուկի բացահայտման փոխարեն  
հեղինակները առավել հաճախ, ելնելով «պրեստի-  
ժային» նկատառումներից, ջանում են իրավունքի  
ճյուղ հայտարարել հասարակության կյանքի այս  
կամ այն ոլորտում տարաբնույթ և տարածյուղ նոր-  
մերի և նորմատիվ իրավական ակտերի նոր-նոր

ձևավորվող կառուցվածքային կազմությունից գրե-  
թե գերծ որևէ միացություն: Այս իմաստով առավել  
բնորոշ են փորձերը՝ որպես արդեն ձևավորված  
ճյուղ, հոչակելու «քժշկական իրավունքը», թեև զի-  
տությունը մինչև այժմ էլ գոնե մոտավորապես չի  
ուրվագծել օրենսդրության քժշկական ճյուղի շրջա-  
նակները: Այսպես, օրինակ, Ռ. Ա. Կվերնաձեն,  
վերլուծելով օրենսդրության քժշկական ճյուղի Ընդ-  
հանուր և Հատուկ մասերի՝ իր կողմից առանձ-  
նացվող ինստիտուտներն ու կառուցվածքային  
ստորաբաժանումները, ընդհանրապես չի հիշա-  
տակում քժշկական օրենսդրության՝ բնակչության  
համար անշահ կարևոր ինստիտուտի մասին, ինչ-  
պիսին է դեղամիջոցների շրջանառությունը,  
առանց որի պատշաճ կանոնակարգման ազգային  
առողջապահության կատարելագործման մասին  
բոլոր խոսակցությունները կմնան լոկ բարի ցան-  
կություններ:

Օրենսդրության ճյուղային կառուցվածքում  
ամենաէական կոլիզիաները կապված են ճյուղե-  
րից ավելի մեծ կառուցվածքային գոյացություննե-  
րի չկարգավորվածության հետ: Խորսն այն գոյա-  
ցությունների մասին է (գիտության մեջ նրանք  
ստացել են «օրենսդրական զանգվածներ» (համա-  
լիր) անվանումը), որոնց ծավալն ու ներքին կազմա-  
կերպվածությունն այնպիսին է, որ նրանց կառա-  
վարումը մեկ ակտիվ կենտրոնի, այսինքն՝ զանգ-  
վածը դեկապարու կողմից կացված ակտի միջոցով  
ըստ եռթյան անհնարին է: Բանն այն է, որ նման  
դեպքերում հիմնարար ակտի վերացականության  
աստիճանի անխուսափելի մեծացման հետ մեկ-  
տեղ նվազում է նրա կողմից համակարգի արդյու-  
նավետ կառավարման կարողությունը, ինչը նման  
ակտի ընդունումը դարձնում է փաստորեն ավելորդ:  
Այս դեպքում կառավարման կապերը օրենսդրա-  
կան զանգվածի (համալիրի) ներսում պետք է  
իրենց տեղը զիջեն համակարգող կապերին՝ նման  
այն կապերին, որոնք գոյացություն ունեն իրավունքի  
համակարգի մասնավոր և հանրային իրավունքի

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ոլորտների ներսում:

Նման տեսակի կոլիզիաների քննորոշ օրինակ է այսօր գործող ՀՀ Քր. օր-ի և Քր. դատ. օր-ի միջև եղած ժամանակային և բովանդակային անհամաձայնեցվածությունը. դրանց ընդունման և ուժի մեջ մտնելու տարրերությունը կազմում է հինգ տարի: Այնինչ՝ քրեական և քրեական-դատավարական օրենսդրությունը պրակտիկայում պետք է հանդես գա ոչ միայն որպես ճյութական-դատավարական բրոկ, այլև որպես հանցագործության դեմ պայքարի օրենսդրական գանգվածի հիմք, որը ներառում է հարակից, սակայն առարկայական բնութագրումներով ոչ միասեռ, սակայն ֆունկցիոնալ կապերով հարաբերվող քրեական, քրեական-դատավարական և քրեական-կատարողական ճյուղերի օրենքներ: Հնարավոր է, որ հենց դրանում է մեր հասարակության վրա եկող հանցագործության ալիքի դեմ պայքարի անարդյունավետության պատճառներից մեկը:

Ոչ պակաս կարևոր է համակարգայնությունը նաև այն օրենսդրական գանգվածների (համալիրների) համար, որոնք հիմնված են նրանց մեջ մտնող օրենքների և ենթաօրենսդրական ակտերի միջև առարկայական կապերի վրա այն դեպքերում, եթե մի համալիրի մեջ են մտցվում իրավունքի միասեռ ճյուղերին համանման օրենսդրության ճյուղեր, ինչպես դա տեղի է ունենում քնապահանական գանգվածում: Բնության պահպանության մասին օրենսդրության ճյուղերի նորմատիվ-իրավական ակտերի փոխադարձությունը այլոց թվում արտահայտվում է նաև նրանում, որ այդ ճյուղերից (հողային, ջրային, անտառային, լեռնային իրավունքը) յուրաքանչյուրն առանձին-առանձին և բոլորը միասին պետք է հաշվի առնեն քնապահանական օրենքների փոխապահպահությունը և դրանցից ամեն մեկի ազդեցությունը մյուսի վրա:

Այս ամենը հաշվի առնելով կարելի է ասել, որ քնապահանական համալիրի մեջ պետք է ներառվեն և, հետևապես, ներքուստ համաձայնեցվեն օրենքները և ենթաօրենսդրական ակտերը օրենսդրության բոլոր այն ճյուղերից և ինստիտուտներից, որոնք որոշում են կամ կոչված են որոշելու մարդու քնակության միջավայրի իրավական ուժինը, անկախ այն բանից՝ կողմիկիկացված է այն, թե դեռ ոչ:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ առանձին դեպքերում, ըստ առարկայական հատկանիշի, առանձնացված օրենսդրական կարգավորման խոշոր գանգվածները (համալիրները) կարող են ներառել ոչ միայն ճյուղեր և ինստիտուտներ, այլև մասշտարով պակելի փոքր գանգվածներ: Այսպես, զյուղատնտեսության մասին օրենսդրությունը կարող է միաժամանակ դիտարկվել և որպես օրենսդրության ներքում կարգավորման ինքնուրությունը պահպանված է առանձին դիտարկությունում:

Իրական կարգավորման ինքնուրությունը գանգված, և որպես շատ ավելի ընդարձակ տևական օրենսդրության համալիրի բաղադրամաս:

Ազգային օրենսդրության տեսական իմաստավորումը և համակարգայնության աստիճանի բարձրացումը ենթադրում է, անշուշտ, նաև նրա հիերարխիկ (ուղղահայց) կառուցվածքի կանոնակարգություն:

Ազգային օրենսդրության համակարգայնության բարձրացման ուղիների որոնման տեսական վերլուծությունը ներառում է ոչ միայն նորմատիվիրավական ակտերի հիերարխիայի և այդ ակտերի յուրաքանչյուր տեսակով կարգավորվող հասարակական հարաբերությունների շրջանակի առանձնահատկության հարցերը, այլև նորմատիվիրավական հրահանգավորումների մակարդակով կատարվող գործներացմերը:

Ինչպես հայտնի է, իրավական կարգավորումը բազմամակարդակ համակարգ է: Նրանում տեղ են գտնում ինչպես հասարակության մեջ վարքի ընդհանուր կանոնները, այնպես էլ առանձին, հատուկ կանոններ՝ պայմանավորված հարաբերությունների բնույթով և դրանց իրագործման մեխանիզմով: Որոշելու համար այն մակարդակը, որում պիտի կարգավորվի հարաբերությունը, անհրաժեշտ է դեկավարվել կառավարման ընդհանուր կանոնով. որոշումը պետք է ընդունել այն մակարդակում, որը կա ամենամարդամասն ինֆորմացիան և նրա գնահատման և օգտագործման ամենաօպտիմալ հնարավորությունը:

Անհայտ է, որ օրենսդրի մարմնի մակարդակում չի կարող լինել գործունեության այս կամ այն կոնկրետ տեսակի մասին լիակատար, մանրամասն, անմիջական և օբյեկտիվ ինֆորմացիա: Այդպիսի ինֆորմացիան առկա է միայն տվյալ հարաբերությունների կառավարման ամենամոտ մակարդակում: Օրենսդրական բարձր մակարդակում հաճախ չկան համապատասխան պայմաններ ու հնարավորություններ ներկայացված ինֆորմացիայի լիության և հավաստիության զնահատման համար: Այդ պատճառով էլ օրենսդրը կոնկրետ նորմերի ասհմանման փոխարեն սահմանափակվում է ընդհանուր հայտարարագրերով, ցանկություններով և հղումներով կառավարման այն մարմինների ակտերին, որոնք փաստորեն կարող են և պետք է սահմանեն համապատասխան կանոնները:

Բացի այդ, օրենքների ընդունումը, ըստ գործունեության առանձին տեսակների, որոնք իրականում պետք է կարգավորվեն կառավարության կամ առանձին գերատեսչությունների կողմից, ոչ միայն բերում է օրենքների որակի կտրուկ անկում, այլև բացասական ազդեցություն է գործում պետա-

կան կառավարման մարմինների ողջ համակարգի վրա: Պրակտիկայում դա դրսեռքվում է որպես պետական յուրաքանչյուր մարմնի ձգտում՝ ստանալու օրենք «Քր մասին», որում ապահովված կլինին գերատեսչական խմբակային շահերը: Լոքինզի, նման օրենք «հայրայթելու» փորձերը միայն շեղում են կենսական հրատապ հարցերի լուծումից, սեփական իրավասության շրջանակներում որոշումները ընդունելուց, ինչպես նաև այդ որոշումների համար պատասխանատվություն կրելուց:

Պարզ է, որ օրենքով կարգավորել գործունեության բոլոր տեսակները ոչ միայն նպատակահարմար չեն, այլև անհնար է: Տվյալ իրավիճակից կա միայն մեկ ելք՝ նորմատիվ-իրավական ակտերի առարկայի որոշման գիտականորեն հիմնավորված չափանիշների օրենադրական ամրագրում:

Դա անհրաժեշտ պայման է օրենքի կողմից իր կարգավորիչ գործառույթի կատարման, նրա՝ որպես իրավական գերազույն ուժի ակտի արդյունավետության համար:

Ազգային օրենսդրության համակարգայնության և արդյունավետության բարձրացման կարևոր միջոց է հանդիսանում օրինաստեղծ գործունեության մեջ տրամաբանության բոլոր օրենքների և պահանջների պահպանումը:

Ժամանակակից տրամաբանությունը նորմատիվ գիտություն է լեզվի օգնությամբ իրականացվող ինտելեկտուալ գործունեության ձևերի և սկզբունքների մասին: Ներկայիս տրամաբանությունը արագ կերպով զարգանում է ինչպես տրամաբանական նոր միջոցների (օրինակ անհստակ բազմությունների տրամաբանություն) յուրացման, այնպես էլ այլ գիտությունների ինֆորմատիկայի, հաշվիչ տեխնիկայի բնագավառ (համակարգչային տրամաբանություն) ակտիվ ներխուժման շնորհիվ:

Գիտական տեսակետից օրենսդրությունն ու իրավունքը իրենցից ներկայացնում են տրամաբանական համակարգեր, որոնք կազմված են տրամաբանական տարատեսակ հարաբերություններով և դաշնաբներով փոխկապված բազում բարդ նորմատիվային դաստորդություններից:

Օրենսդրության՝ որպես իրավունքի ձևի համակարգայնության համար օրենսդիրն ակտիվորեն օգտագործում է տրամաբանական ձևերի և միջոցների ողջ հավաքածուն (տարբեր հասկացությունները, դաստորդությունները, բնորոշումները, ձևակերպումները, դասակարգումները, վերլուծությունն ու սինթեզը, եզրահանգումները և այլն): Հարկ է ճանաչել նաև, որ բանականության տեսության և պրակտիկայի առումով իրավունքը ու օրենսդրությունը հանդիսանում են ինտելեկտուալ համակարգ՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Օրենսդրության համակարգայնությանն անհարիր են նրա այնպիսի բերությունները, ինչպիսիք են հակասականությունը, մի նորմի անհամապատասխանությունը մյուսներին, տրամաբանական սխալների առկայությունը: Համաձայն անհակասականության օրենքի (իսկ դա տրամաբանության օրենքներից մեկն է)՝ երկու մտքեր հակասում են մեկը մյուսին, եթե նրանք անհամատեղելի են կամ բացառում են մեկը մյուսին<sup>8</sup>: Օրենսդրության համակարգում հակասությունների առկայությունը ըստ էության քայլայում է իրավաբանական մատերիայի կտավը: Հարկ է հաշվի առնել, որ իրավունքի և օրենսդրության համակարգում հակասությունը, որպես կանոն, կրում է լատենտային, բարնված բնույթը և ի հայտ է զայիս միայն օրենքի կամ իրավական նորմատիվ այլ ակտի մեկնաբանման արդյունքում:

Վերջին տասնամյակում օրենսդրության անհակասականության խնդիրը հույժ կարևոր նշանակություն է ձեռք բերել իրավաբանական տեսության և պրակտիկայի համար: Այսպես, ՀՀ Սահմանադրությունը (2015թ. փոփոխություններով) պարունակում է տարբեր բովանդակության մի շարք հոդվածներ՝ նվիրված օրենքներին և տարբեր մակարդակների հիմնախնդրին. մասնավորապես ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը նվիրված է իրավական նորմերի աստիճանակարգությանը, ըստ որի. «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: 2. Օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմային ակտերը սահմանադրական օրենքներին և օրենքներին: 3. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը»:

Այս ամենը հաշվի առնելով՝ կարելի է ձևակերպել մեկ ընդհանրական կանոն: Տարբեր կարգի նորմատիվ-իրավական համակարգային հիերարխիայում յուրաքանչյուր հաջորդ նորմատիվ ակտը (այսինքն՝ այնպիսի ակտը, որը գունվում է հիերարխիկ ավելի ցածր մակարդակում) չի կարող հակասել ավելի բարձր մակարդակի իրավական ակտերին:

Իրավագետների առջև կարևոր մի խնդիր է կանգնած. մշակել նորմատիվ-իրավական տեսաւորիքի վերլուծության մեթոդներ՝ դրանց մեջ հնարավոր հակասությունները ի հայտ բերելու համար: Այսպես, ուշադրության է արժանի Ն. Ա. Վլասենկոյի առաջարկը՝ օրենսդրության մեջ եղած հակասությունները բաժանել ժամանակավոր, տարածային, բովանդակային և հիերարխիկ հակասությունների:

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Նորմատիվ տեքստերի համակարգչային վերլուծությունը վերաբերում է ընդհանուր և իրավական ինֆորմատիկայի զիսավոր խնդիրներին և հանդես է գալիս որպես արիեստական բանականության հիմնախնդրի մաս: Դրա հետ մեկտեղ այն նաև ինքնին բարդ հարց է: Տվյալ ոլորտում արված են թեև առաջին, սակայն բավական հուսադրող քայլերը: Իրավաստեղծման բնագավառում ինտելեկտուալ համակարգերի ստեղծումը պետք է հենվի մարդ-մեքենա համակարգերի մշակումների վրա: Յուրաքանչյուր նման համակարգի աշխատանքի ժամանակ երկխոսություն է ընթանում իրավաբանի և համակարգչի միջև: Դրա նպատակն է տալ դիտարկվող տեքստի համակարգային վերլուծություն և իմացարանական տարածության մեջ գտնել այն ոլորտները, օրենքի այն մասերը, որտեղ կարող են հակասություններ ծագել:

Իրավաստեղծ գործնթացում անհրաժեշտ է օգտագործել ոչ միայն դասական տրամարանության ապարատը, այլև տրամարանական նոր միջոցները: Դրանցից է մասնավորապես դեռնտիկ (նորմատիվային) տրամարանությունը<sup>10</sup>: Դեռնտիկ տրամարանությունն ուսումնասիրում է պրեսկրիպտիվ լեզվի (նորմեր իրազործող նորմատիվ բանաձևումների և գործողությունների լեզու) տրամարանական կառույցները: Այն հանդիսանում է մոդուլային (եղանակավոր) տրամարանության ճյուղը և ուսումնասիրում է հատկությունները այնպիսի օպերատորների, ինչպիսիք են՝ «հնարավոր է», «պարտադիր է», «քույլատրված է», «արգելված է»:

Դեռնտիկ տրամարանության մեջ նորովի են դրվում օրենքների անհակասականության հարցը: Տվյալ հարցադրումներին վերաբերող ինֆորմացիոնների թիվն ավելանում է: Խոսքը նշանակային տեսքով արտահայտված հետևյալ պահանջների մասին է.

~Պկ ^ Պկ

~Ծգ ^ Ծգ

~Ագ ^ Ագ

Պայմանանշաններն այստեղ նշանակում են.  
 «Պ» - պարտականություն, «Ծ» - քույլատրվություն,  
 «Ա» - արգելվ, «» - «» - «Լ» հոդը, «» - բացառում, «Գ» - գործողություն:

Այսպիսով, առաջին գործողությունը նշանակում է հետևյալը. չի կարող ճշմարիտ լինել մի նորմ, որը միաժամանակ պարունակում է և որևէ գործողություն կատարելու պահանջ, և դրա բացառում:

Երկրորդ դիրքը մեկնաբանվում է այսպես, չի կարող ճիշտ լինել մի նորմ, որը միաժամանակ պարունակում է և որևէ գործողություն կատարելու քույլատրվություն, և դրա արգելվ:

Երրորդ պահանջը հանգում է հետևյալին. չի

կարող լինել մի նորմ, որը միաժամանակ պարունակում է և որևէ գործողություն կատարելու արգելվ, և դրա բացառում:

Հայաստանի Հանրապետության օրենքներում հաճախ հանդիպում ենք այնպիսի տրամարանական ձևերի, ինչպիսիք են հասկացությունները և դրանց բնորոշումները: Դրանց համակարգաստեղծ նշանակությունն այն է, որ դրանք ի մի են բերում, կոնսոլիդացնում են իրավական ողջ նյութը: Օրենտրական ակտերի մեջ կատեգորիաներն ու հասկացությունները մեկ ամբողջի են միավորում տարբեր հարաբերություններ, օրինակ, ենթակայությունը և համաենթակայությունը և այլն:

Նորմատիվ-իրավական ակտերի տեքստերում գործածվում են բնորոշումների տարբեր տեսակներ՝ սուբստանցիոնալ (բարդ հասկացության իմաստի պարզաբնում) և նոմինալ (տվյալ հասկացության իրավաբանական ֆունկցիայի պարզաբնում): Կարող են օգտագործվել նաև ակներև և ոչ ակներև բնորոշումներ:

Օրենքներով կիրավող հասկացությունների իմաստը պետք է լինի մշտական և անփոփոխ: Հակառակ դեպքում ծագում է տեքստի անհամաձայնեցվածության, նրա համակարգային կազմակերպվածության մակարդակի նվազման ֆենոմենը:

19-րդ դարի երկրորդ կեսին ձևավորվեցին անհատակ բազմության և անհատակ տրամարանության հասկացությունները: Դրանց հատուկ դեր է պատկանում այն սոցիալական երևույթների նկատմամբ գործում, որոնք գործնականում ունեն ոչ հատակ տրամարանական կառուցվածք: Օրենտրական տեքստերում գոյություն ունեցող անհատակ բազմությունները կարելի է բաժանել որակականների («արդարություն», «ինֆորմացիան», «քացառիկ ցինիզմ»), «ակնհայտորեն սուս ցուցմունքներ» և այլն) և քանակականների («սիստեմատիկ շղթումներ», «արարքի ծանրություն», «խոշոր չափեր» և այլն): Իրավունքի տեսության մեջ այդ հասկացությունները ավանդաբար դիտվում են որպես գնահատականային հասկացություններ: Սակայն, նման մոտեցումը չի բացահայտում իրավաբանական և տրամարանական երևույթի բոլոր կողմերը:

Օրինագծի վրա աշխատելիս օրենսդիրը ջանում է հատակ դարձնել օրինագծի մեջ եղած անհատակ հասկացությունները: Դա իրականացվում է հասկացությունների բնորոշումների ներմուծման ճանապարհով: Սակայն, նման բանը ոչ միշտ է հնարավոր: Այդ իսկ պատճառով իրավական-նորմատիվ ակտերի տեքստերում մնում է անհատակ հասկացությունների որոշակի մաս, և դա ենթակա է

տրամաբանական մեկնաբանման:

Այս ամենը վկայում է, որ օրինագծերի մշակման ընթացքում կարող են ծագել տրամաբանական-իմացարանական բարդ հարցեր: Այդպիսի դեպքերում նպատակահարմար է նշանակել տրամաբանական փորձաքննություն, որը պետք է կրի համայիր բնույթ: Իրավագետների հետ մեկտեղ փորձաքննությանն անհրաժեշտ է ներգրավել նաև քանատերներին և տրամաբանական գիտության ներկայացուցիչներին:

Տրամաբանական փորձաքննությունը կոչված է լուծելու այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ տրամաբանական սխալների վերացում, օրինագծի տրամաբանական սրբազրում, օրինագծի տրամաբանական կառուցվածքի բարելավման ուղղությամբ առաջարկների և հանձնարարականների մշակում և այլն:

Ազգային օրենսդրության համակարգի ամրապնդումը ենթադրում է նրա ոչ միայն նյութական, այլև դատադրական ճյուղերի կատարելագործման:

ՀՀ փոփոխված Սահմանադրության ընդունումից հետո (2015թ.) կարիք ունեն արմատական փոփոխությունների հատկապես օրենսգրքերը և բազային օրենքները: Մասնավորապես, փոփոխված Սահմանադրությունը ազգային օրենսդրության համակարգում ներմուծեց «սահմանադրական օրենք» հասկացությունը, որը գոյություն ուներ ազգային իրավունքի համակարգում մինչև Սահմանադրության ընդունումը (1995թ.):

ՀՀ Սահմանադրության մեջ հստակ և սպառիչ թվարկված են այն իրավակարգավորումները, որոնց դեպքում օրենսդիրն ընդունում է սահմանադրական օրենք: Այսպես, ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, «Ազգային ժողովի կանոնակարգը, ընտրական օրենսգիրը, Դատական օրենսգիրը, Սահմանադրական դատարանի մասին օրենքը, Հանրաքվեի մասին օրենքը, Կուսակցությունների մասին օրենքը և Սարդու իրավունքների մասին» օրենքը սահմանադրական օրենքներն են և ընդունվում են պատգամավորների ընդհանուր ձայների թվի առնվազն երեք հինգերորդում: Սահմանադրական օրենքի իրավակարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից»:

Հետևաբար, ըստ իր իրավագորության, այսինքն՝ իրավաբանական ուժի, սահմանադրական օրենքը երկրորդ նորմատիվ իրավական ակտն է՝ ՀՀ Սահմանադրությունից հետո, իսկ մնացած նորմատիվ իրավական ակտերը՝ սովորական օրենքները և ենթաօրենդրական ակտերը, չպետք է հակասեն սահմանադրական օրենքներին: Բացի

սահմանադրական օրենքների ընդունումից, ՀՀ Ազգային ժողովը երկու տարվա ընթացքում պետք է ընդունի մի քանի տասնյակի հասնող նոր օրենսդրական ակտեր և բազմաթիվ փոփոխություններ կատարի օրենսդրության համակարգում:

Այսպիսով, ազգային օրենսդրության արդյունավետության բարձրացման համար կարևորագույն գործոն է օրինաստեղծ գործունեության կանոնակարգման, այլև բուն նորմատիվ-իրավական բազայի կատարելագործման, ինչպես նաև օրենսդրական մարմինների և երկրի բնակչության միջև ուղղակի և հետադարձ կապի հաստատման և ամրապնդման համար:

Իրավական բազայի նորացումը (սահմանադրական օրենքի կարգավիճակով նոր կանոնակարգի ընդունումը) և բուն նորմատիվ իրավական ակտերի հստակ աստիճանակարգումը, որում Սահմանադրությունը գրադեցնում է աստիճանակարգման բուրգի գագարը (հիմնական նորմը՝ ըստ Հանս Քելգեսի):

- <sup>1</sup> Տե՛ս Ստեփանյան Հ.Ա. Հայաստանի օրենսդրության համակարգումը (Փորձ և հիմնահարցեր): Երևան, 1995թ.:
- <sup>2</sup> Малеина М. Н. Человек и медицина в современном мире. М., 1995.
- <sup>3</sup> Квернадзе Р. А. 71 некоторые аспекты становления и развития законодательства в области Здравоохранения //Гос. и право, 2001, N 8, С. 88-104.
- <sup>4</sup> Տե՛ս Правовые модели и реальность. Отв. ред. Тихомиров Ю.А., Рафалюк Е.Е., Хлуснова Н.Н. М., 2014, С. 11-12.
- <sup>5</sup> Տե՛ս Осипов М.Ю. Системы в праве и правовые процессы. М., 2015, С. 5-6.
- <sup>6</sup> Մամրամաս տե՛ս Պետրով Ա.Ա, Ռաֆիրով Վ.Մ. Предметная иерархия нормативных правовых актов. М., 2014.
- <sup>7</sup> Իրավաբանական և տրամարանական այն միջոցները, որոնք ուղղված են օրենսդրության համակարգի մեջ հակասությունների և այլ թերությունների վերացմանը, կոչում են համակարգապահպանիչ: Այդպիսիններից են, օրինակ, կոլիզիոն իրավունքի նորմերը:
- <sup>8</sup> Համաձայն մաթեմատիկական տրամարանական թեորեմների՝ հակասական դատողություններ պարունակող առաջնադրույթներից կարելի է բխեցնել ցանկացած դատողություն:
- <sup>9</sup> Տե՛ս Власенко Н.А. Проблемы точности выражения формы права (Логико-лингвистический анализ). Автореф. дисс. на соискание уч. ст. доктора юрид. наук. Екатеринбург, 1997.
- <sup>10</sup> Նորմատիվային տրամարանությունը իր զարգացումն ստացել է ֆոն Ռայտի, Ա. Իվինի և այլ գիտնականների աշխատություններում:

Сюзанна Назинян

Соискатель института философии, социологии и права  
Национальной Академии Наук Республики Армения

### РЕЗЮМЕ

#### *О вопросе усовершенствования системы национального законодательства*

В настоящей статье обстоятельно рассматривается нынешнее состояние национального законодательства, а также проблемы, связанные с усовершенствованием законодательства.

**Ключевые слова:** национальное право, действующее законодательство, система права, отрасль права, правовой институт, правовая норма.

Syuzanna Nazinyan

Applicant of the Philosophy, Sociology and Law Institute  
of the National Academy of Sciences of the Republic of Armenia

### SUMMARY

#### *On the issue of improvement of the national legislative system*

The Article covers in detail the present situation of the national legislation, as well as the problems of improving the legislative system.

**Keywords:** national law, acting legislation, system of law, branch of law, legal institution, legal norm.